ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբեր, 2024

Բովանդակություն

Բովանդակություն 1

Ֆինանսական դիրք 2

Վարկային պորտֆել և համեմատականներ 3

Տրամադրված վարկերի ծավալը 3

Տրամադրված վարկերի քանակը 3

Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ 5

Վարկերի կառավարում 6

Վերլուծական գործակիցներ 7

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2024թ.-ի Հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 214.08 մլրդ դրամ՝ 2023թ.-ի Հոկտեմբերի նկատմամբ աճելով 14.4%-ով, իսկ 2024թ.-ի Սեպտեմբերի նկատմամբ՝ 0.4%-ով: (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2024թ.-ի Հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 166.13 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Հոկտեմբերի նկատմամբ աճելով 15.8%-ով, իսկ 2024թ. Սեպտեմբերի նկատմամբ՝ 0.9% (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2024թ.-ի Հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 77.63 մլրդ դրամ՝ 2023թ.-ի Հոկտեմբերի նկատմամբ աճելով 14.6%-ով, իսկ 2024թ.-ի Սեպտեմբերի նկատմամբ աճելով 1.3%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2023-2024թթ. Հոկտեմբերի վերջի դրությամբ



Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2024թ.-ի Հոկտեմբեր ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 13.07 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 12.1%-ով, իսկ 2024թ.-ի Սեպտեմբերի նկատմամբ աճել է 5.1%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2023 և 2024 թթ.-երի Հունվար-Հոկտեմբեր ամիսներին տրամադրված վարկերի ծավալը



Տրամադրված վարկերի քանակը

- 2024թ.-ի Հոկտեմբեր ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 60,909 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 1.9%-ով, իսկ 2023թ.-ի Հոկտեմբերի նկատմամբ աճել է 3.1%-ով (Գծ. 3):

- 2024թ.-ի Հոկտեմբեր ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 204,734 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2023թ.-ի Հոկտեմբերի նկատմամբ աճել է 11.6%-ով, իսկ 2024թ.-ի Սեպտեմբերի նկատմամբ նվազել է 0.2%-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2024թ.-ի Հոկտեմբերին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 215 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 811 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2023թ.-ի Հոկտեմբերին կազմել են համապատասխանաբար՝ 197 և 782-հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2023 և 2024 թթ.-երի Հունվար-Հոկտեմբեր ամիսներին տրամադրված վարկերի քանակը



Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2024թ.-ի Հոկտեմբերի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 151 մասնաճյուղ, որը, համեմատած 2023թ.-ի Հոկտեմբերի հետ, աճել է 2-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2024թ.-ի Հոկտեմբերի դրությամբ ունեցել են 417 վարկային մասնագետ, որը, համեմատած 2023թ.-ի Հոկտեմբերի հետ, նվազել է 46-ով:
- 2024թ.-ի Հոկտեմբերին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 31.34 մլն դրամ, նախորդ ամսին՝ 28.52 մլն դրամ, իսկ 2023թ.-ի Հոկտեմբերին այս ցուցանիշը կազմել է ևս 25.17 մլն դրամ (Գծ. 5):
- 2024թ.-ի Հոկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 398.40 մլն դրամ, նախորդ ամսվա 377.70 մլն դրամի և 2023թ.-ի Հոկտեմբերին 309.84 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2024թ.-ի Հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1,513 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,836 մլն դրամ և 2023թ.-ի Հոկտեմբերին՝ 1,871 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 19.1%-ով, իսկ 2024թ.-ի Սեպտեմբերի նկատմամբ՝ 17.6%-ով: 2024թ.-ի Հոկտեմբերի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 0.91%-ը, 2023թ.-ի Հոկտեմբերին ևս կազմել է 1.30% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2024թ.-ի Հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 3,062 մլն դրամ, նախորդ ամիս՝ 3,208 մլն դրամ և 2023 թ.-ի Հոկտեմբերին՝ 2,845 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը աճել է 7.6%-ով, իսկ 2024թ.-ի Սեպտեմբերի նկատմամբ նվազել է 4.5%: 2024թ.-

ի Հոկտեմբերի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.84%-ը, 2023թ.-ի Հոկտեմբերին՝ 1.98% (Գծ. 6):

- **Զուտ դուրսգրումներ:** 2024թ.-ի Հոկտեմբերի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 807 մլն դրամ, նախորդ ամիս՝ 629 մլն դրամ և 2023թ.-ի Հոկտեմբերին՝3,086 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2024թ.-ի Հոկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 28.1%-ով, իսկ 2023թ.-ի Հոկտեմբերի նկատմամբ նվազել է 73.9%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Հոկտեմբերի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.49%-ը, նախորդ ամիս՝ 0.38% և 2023թ.-ի Հոկտեմբերին 2.15% (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Հոկտեմբերի 31-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2024թ.-ի Հոկտեմբերի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 77.6%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2023թ.-ի Հոկտեմբերին կազմել է 76.7% (Գծ. 7):

- Սույն թվականի Հոկտեմբերի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 46.7%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 47%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2023թ.-ի Հոկտեմբերին կազմել է 47.2% (Գծ. 7):
- 2024թ.-ի Հոկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 36.3%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2023թ.-ի Հոկտեմբերին կազմել է 36.2% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2024թ.-ի Հոկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 1.76, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 1.8 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Հոկտեմբերի համար կազմել է 1.76:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ




Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ու քանակությունը
59,106
62,924
70,134
63,592
63,943
66,530
60,829
65,959
60,293
62,926
61,219
59,785
60,909
Oct-23
Nov-23
Dec-23
Jan-24
Feb-24
Mar-24
Apr-24
May-24
Jun-24
Jul-24
Aug-24
Sep-24
Oct-24


Ժամկետանց վարկերի դինամիկան 10/2023-10/2024
PAR 1-30 days
PAR more than 30 days
6,000,000
5,000,000
4,000,000
3,000,000
2,000,000
1,000,000
-
Oct-23
Nov-23
Dec-23
Jan-24
Feb-24
Mar-24
Apr-24
May-24
Jun-24
Jul-24
Aug-24
Sep-24
Oct-24